թեամբ, մազերը կինեմոնագոյն և երկու փոքրիկ փնջեր գլխարկի տակից ճակատի վերայ իջած։ Ձեռքերը նուրբ են, բարակ և երկար մատներով. աջով բռնել է ծնկանը դրած աւետարանը վերեւի կողքից, իսկ ձախը գրել գրքի երեսին։ Ընդհանուր զգեստաւորութեամբ նման է Խութլու բուզայի՝ Սադուն աթաբէգի որդու որմանկարին՝ Հաղբատի հարաւային պատի վերայ, որի լուսանկարը հրատարակել է ակադեմիկ Մառը(*), իսկ գունազարդ արտանկարութիւնն այժմ գտնւում է Երևանի թանգարանում։

Հետաքրքրական է նաև բարձրաթիկունք և զարդարուն աթոռը, որի վերայ նստած է. աթոռի տակ փռուած է զարդարուն գորգ(?), տեսանելի են երեք ոտները։ Նստողի ոտները գետնի վերայ չեն, այլ աթոռի խորութեան մէջ, կարծես կախուած։ Ներքևի մասի առաջնահայեաց կողմը զարդարուած է ճաղերի շարքով, ինչպէս սովորական է պատշգամբների համար։ Աւելի բարձր նստելու տեղն է երկարաձիգ, ոսկեճամուկ բարձով եւ սա ծածկուած զարդարուն լաթով, որի վերայ բազմած է պատանի Վախտանգը։ Մէջքի մասը ծածկուած է կանաչ գաշտի վերայ սև խաչանիշներով զարդարուած կտորով. վերին անկիւնները ոսկեգոյն սրտաձևերի մէջ եռատերեւի օրնամենտով։ Թիկունքի վերին անկիւններում մի մի շրջանակով եզերուած նեղ և երկար լուսամուտ, իսկ ճակատին ձգուած է զարդարուն տախտակ, գլխին բոլորաձև գմբեթ, շրջապատուած աւելի փոքրիկ գմբեթիկներով, որոնք նոյնպէս փոքրիկ լուսամուտներ ունին, գուցէ և իբրև զարդ։ Մի խօսքով իշխանական մի փառաւոր գահոյք է, գուցէ և նմանութեամբ եպիսկոպոսական աթոռների։ Արդէն «ավ. մեծացեալ մեծ պատրոն» վերտառութիւնը պարզ ապացոյց է, որ նորա վերայ նստող Վախտանգը իշխանական ծագում ունի։

Բ.

Բայց ո՞վ է նա։

Բարեբախտաբար այս հարցի պատասխանը լիովին պարզում են մատենագրական և արձանագրական մի քանի աղբիւրներ. Էջմիածնի մատենադարանում ունինք մի երկրորդ ձեռագիր, N 980 նժ., պատրաստուած նոյնանուն մի պատանի իշխանի համար, որ միայն Մատթէոսի աւետարանն է, կաշեպատ կազմով, 5,50 × 7 սմ. մեծութեամբ, գրուած լաւ և պինդ մագաղաթի վերայ, փոքր երկաթագրից բոլորգրին անցնող ընտիր գրչութեամբ (պաsկեr 8)(*). բնորոշ տառերից չ, գ, յ, ջ երկաթագիր, իսկ ա, յ, ց, բոլորգիր։ Բուն գրչութիւնը 5,1 × 4,1 սմ.։ Ամբողջը 205 թերթից բաղկացած։

Սկզբում 1 ա. Մատթէոսի անդրին է, աւետարանը ձախ ձեռքով բռնած, իսկ աջը կրծքին դրած. յաջող մանրանկար է, բայց վատ պահուած. սկզբնազարդը վերևից ուղղանկիւն է, ներքևից բաց. Գ–ը մեծ ոսկեղիր, բայց խոնացած։ Հատուածներն սկսւում են կարմրագեղով, միջին բոլորաձև երկաթագրով. լուսանցքին սովորական հիւսուածքի, եռատերևի, իրար մէջ հագցրած սրտաձևերի մոտիւներով, ոսկի գաշտի վերայ։ Բոլոր հատուածների դէմ զարդեր չկան. ամբողջը կարող և ազնիւ գրչի գործ է։

Ցիշատակարանից տեղեկանում ենք, որ գրուած է «մատթէոսեան աւետարանս ի թվի. ՉԻԸ։ յամսեանս արեգ. ԻԸ։ հրամանաւ բարիարմատ և քաղցրամիտ պատրոնին . . . անկա (այսինքն Վախտանկա կամ Վաղթանկա, պակաս մասը քերուած է). որդո Ամասէր մեծ պատրոնին Ումեկին (այս անունն էլ թեթև քերուած, բայց նոյն գրերի վերայով տարբեր թանաքով նորոգած) և թոռին իշխանաց իշխանին Ջալալին։ ի վայելումն եւ ի պահպանութի. անձին իւրոյ։ և ի խրատ և ի վարժումն մանկական տիոց իւրոց»։ Գրուած էր և պատանի իշխանի մօր անունը, բայց անհարազատ ձեռքը ջնջել է և տեղը «Զուլու խաթուն» նշանակել։

Երկու ձեռագիրների ծագման մէջ եղած սերտ առնչութիւնը աչքի է ընկնում առաջին բոպէից. երկուսն էլ ստացել է «պատրոն վախտանգ» որդի Ումեկի և պա-

(*) Х. В. 1912։

(*) Մեզի ղրկուած լուսանկարներու մէջ կը պակսի թիւ ութը։ ԽՄԲ.